ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/35

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Գետնառյուծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գետնառյուծ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Գետնառյուծ» ՍՊԸ-ն ստացել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2019թ. կայացած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրությունը, համաձայն որի մերժվել է «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Հանձնաժողովի կողմից մերժման հիմք է ընդունվել ՊԵԿ եզրակացությունը 77,000 ՀՀ դրամի չափով պարտավորություն ունենալու մասին, որը գերազանցում է Օրենքով թույլարտված 50,000 ՀՀ դրամի շեմը:

ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությունը վերաբերում է դրոշմանիշային վճարներին: «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճար չեն վճարում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով, և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո չի գերազանցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը:

Մեր կազմակերպությունը գտնվելով հարկադիր պարապուրդում՝ աշխատողներին վճարել է նվազագույն աշխատավարձ և պարտադիր հարկեր և վճարներ: Համարվելով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, որի հիմնադիր սեփականատերերը նաև գործատու են միաժամանակ, նաև աշխատողներ, ուստի Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջներ դեպքում կիրառելի չէ:

Կամավորության սկզբունքով այդ վճարումներն առաջարկվել են 2017թ. հունվարի 1-ից, իսկ մեր ընկերությունը 2017թ.-ի ընթացքում շինարարական աշխատանքներ չի իրականացրել պատվերներ չունենալու պատճառով, գտնվել է ծանր ֆինանսական՝ տնօրենի սրտի բարդ վիրահատության ենթարկվելու պատճառով:

Նշենք նաև, որ այդ վճարները պարտադիր լինելու մասին կազմակերպությունը որևէ ծանուցում չի ստացել, եկամտային հարկի կամ այլ հարկատեսակների էլեկտրոնային հաշվարկներում այդ 1000 դրամների գանձման պահանջը որևէ տեղ չի արտացոլված: Բացի այդ, նշված գումարները պետական բյուջեի նկատմամբ պարտավորություն չեն համարվում, այլ փոխանցվում են համապատասխան հիմնադրամին:

Այդուհանդերձ, պատվիրատուի կողմից տեղեկացվելուց հետո, մեր ընկերությունը կատարել է 83,000 ՀՀ դրամի վճարում և հիմնավորող բանկային քաղվածքը ներկայացրել է պատվիրատուին»:

«Գետնառյուծ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է.

1.Կասեցնել ընթացակարգը և թույլ չտալ կնքել պայմանագիր 2-րդ չափաբաժնի մասով:

2.Չեղարկել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի գնահատման նիստի N3 արձանագրության «Գետնառյուծ» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի մասով կայացրած որոշումը:

3.Պարտավորեցնել հանձնաժողովին «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման 2-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել Ընկերության որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 11.03.2019թ. թիվ 165 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 2019թ. մարտի 6-ին տեղի է ունեցել հանձնաժողովի գնահատման արտահերթ նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ստորագրված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով հայտը ենթակա էր մերժման:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխանությունը»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ««ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, «Գետնառյուծ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 11.03.2019թ. թիվ 165 գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՀ Արարատի մարզի Վարդաշեն համայնքի ոռոգման ցանցի անցկացում», «ՀՀ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրում /500 մ, 12 հա/» և «ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի խմելաջրի ջրագծի մասնակի կառուցում/ներքին ցանց/» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գետնառյուծ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումով, հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 06.03.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության՝

- 2.1 կետով արձանագրել է, որ 2019թ. փետրվարի 13-ի «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստում 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գետնառյուծ» ՍՊԸ-ն, որի մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացվել մրցույթի մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով: «Գետնառյուծ» ՍՊԸ-ի համար մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը իրականությանը չհամապատասխանող, քանի որ մասնակիցն ուներ սահմանված շեմը գերազանցող հարկային պարտավորություններ՝ 77,000 ՀՀ դրամի չափով: Ելնելով վերոգրյալից «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

- 2.2 կետով արձանագրել է, որ 2019թ. փետրվարի 13-ի «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստում «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և հայտը գնահատվել է բավարար, սակայն ստորագրված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով հայտը ենթակա էր մերժման:

- 3.1 կետով Հանձնաժողովը որոշել է մերժել «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտը, հիմք ընդունելով մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխանությունը:

Բողոքաբերը բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք է հանդիսացել ՊԵԿ եզրակացությունը՝ 77,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն ունենալու մասին, որը, ըստ բողոքաբերի, վերաբերում է պարտադիր դրոշմանիշային վճարին: Ընկերությունը վկայակոչելով «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ նշել է, որ դրոշմանիշային վճար չեն վճարում նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով, և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո չի գերազանցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ գտնվելով հարկադիր պարապուրդում՝ աշխատողներին վճարել է նվազագույն աշխատավարձ և պարտադիր հարկերն ու վճարները: Հանդիսանալով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, որի հիմնադիր սեփականատերերը միաժամանակ և գործատու են և աշխատողներ, ուստի Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջը Ընկերության դեպքում կիրառելի չէ: Բացի այդ, Ընկերությունը 2017թ.-ի ընթացքում շինարարական աշխատանքներ չի իրականացրել պատվերներ չունենալու պատճառով և գտնվել է ծանր ֆինանսական վիճակում:

Ընկերությունը նշել է նաև, որ այդ վճարները մարելու վերաբերյալ Ընկերությունը երբեք որևէ ծանուցում չի ստացել, եկամտային հարկի կամ այլ հարկատեսակների էլեկտրոնային հաշվարկներում այդ 1000 դրամների գանձման պահանջը որևէ տեղ չի արտացոլված: Այդուհանդերձ, պատվիրատուի կողմից հիշյալ պարտավորությունների

առկայության վերաբերյալ տեղեկացվելուց հետո, Ընկերությունը կատարել է 83,000 ՀՀ դրամի վճարում և հիմնավորող բանկային քաղվածքը ներկայացրել է պատվիրատուին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

- 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

-40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

-7.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը

մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

-7.19 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ /.../:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, ուսումնասիրելով բողոքով ներկայացված փաստական և իրավական հիմքերը, ինչպես նաև Ընկերության հայտը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստում 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գետնառյուծ» ՍՊԸ-ն:

- Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրած եզրակացության՝ «Գետնառյուծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 77,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Ընկերության հայտը Հանձնաժողովի 13.02.2019թ. նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է՝ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով:

- «Գետնառյուծ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից որպես հայտի մերժման հիմք է ընդունվել ՀՀ ՊԵԿ եզրակացությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն ունենալու վերաբերյալ:

- Հանձնաժողովը 06.03.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ 13.02.2019թ. «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստում «Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատվել է բավարար, սակայն ստորագրված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով հայտը ենթակա էր մերժման, և նույն արձանագրությամբ որոշել է Ընկերության հայտը մերժել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հայտի շրջանակներում գնային առաջարկը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.19 կետով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ հաստատված չի եղել Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հետևաբար, Հանձնաժողովը՝ տվյալ հիմքով մերժելով Ընկերության հայտը՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գետնառյուծ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ